

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵԻԱՅԼՔ****ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 106-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ**

23 Ապրիլ, 2021-ին, տեղի ունեցավ Հայոց Յեղասպանութեան 106-րդ տարելիցին նուիրուած ջահերով երթ Ս. Յակոբեանց Մայր Տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի: Երթին մասնակից էին թէ օտարներ եւ թէ Հայեր, ովքեր պաստառներով եւ դրօշակներով քալեցին դէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի: Ապա երթը շարունակուեցաւ դէպի Հայոց Յեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ մոմավառութիւն:

24 Ապրիլ, 2021-ին, Հայոց Յեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց նահատակաց տօնին, առաւօտեան ժամը 9-ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Հոգշ. Տ. Աղան Աբեղայ Գոգչեանի ձեռամբ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Յաւարտ Ս. Պատարագի, հոգեւորականաց դասը եւ ժառանգաւոր սաներ թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեցին դէպի Հայոց Յեղասպանութեան յուշարձան, ուր Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Ս. Աթոռոյս անունով ծաղկեպսակ մը զետեղեց յուշարձանին: Սրբազանին հետեւեցան Իսրայէլի եւ Երուսաղէմի մէջ գործող հայ միութիւններու ներկայացուցիչները եւ իրենց միութիւններու կողմէ ծաղկեպսակներ զետեղեցին յուշարձանին:

Նոյն օրը երեկոյեան ժամը 19:00-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր, ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս, որն իր լրումին հասաւ Սրբազան Հօր փակման աղօթքով:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 106-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ

27 Ապրիլ, 2021-ին, Երուսաղէմի Եբրայական համալսարանի մէջ տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան նուիրուած յուշ-երեկոյ գիտաժողովին Սուրբ Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ եւ ներկաներուն Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր խօսքը փոխանցեց Հոգշ. Տ. Աղան Աբեղայ Գոգչեան: Յուշ-երեկոյի ընթացքին տեղի ունեցաւ նաեւ յայտնի ցեղասպանագէտ՝ Իսրայէլ Չառնիի հեղինակած «ISRAEL'S FAILED RESPONSE TO THE ARMENIAN GENOCIDE - Denial, State Deception, Truth versus Politicization of History (Academic Studies Press, 2021)» գրքի շնորհանդէսը: Յուշ-երեկոյին ներկայ էին նաեւ ժառանգաւոր սաներէն՝ Յովհաննէս Խումարեան, որ կատարեց «Կը-ռունկ» երգը եւ էրիկ Պողոսեան՝ դաշնամուրային ստեղծագործութիւն մը:

Ներկայ էին նաեւ Երուսաղէմի Եբրայական համալսարանի ռեկտոր՝ Տիար Ռուվէն Ամիրտայ, Պրօֆ. Մայքըլ Սթօն եւ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս՝ Տիար Յուլակ Մոմճեան: Յեղասպանութեան մասին դասախօսութեամբ հանդէս եկաւ Դոկտ. Օդեթ Շտայմպերկ: Օրիորդ Նա՛ամա Ռինկէլ խօսեցաւ

Ղարաբաղեան վերջին պատերազմի մասին, ըսելով՝ Ղարաբաղեան պատերազմը Թուրքիոյ կողմէ ուրիշ փորձ մըն էր Ատրպէյճանի միջոցով՝ ջնջելու Հայոց ներկայութիւնը: Սաղիմահայերէն խօսեցան Տիար Յարութ Պաղամեան, Տիար Գէրոգ Նալպանտեան եւ Տիար Յակոբ Ճոնազեան, իսկ Թարգմանչաց Վարժարանի սաներէն Մարի Խաչատուրեան կատարեց «Ագանայի ողբը»:

Յուշ-երեկոյ գիտաժողովի վերջաւորութեան ներկաներ պատուուեցան հիւրասիրութեամբ:

**ԻՍՐԱՅԷԼԻ ՏԱՐՔԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
200 ՀՐԵԱՆԵՐ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ**

23 Մայիս, 2021-ին, Իսրայէլի տարբեր կազմակերպութիւններու շուրջ 200 հրեաներ այցելեցին Հայոց Պատրիարքութեան ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահ եւ հանդիպում ունեցան 18 Մայիս, 2021-ին հրեայ ծայրայեղական կրօնաւոր երիտասարդներու կողմէ յարձակումի ենթարկուած Տ. Տիրան Աբղ. Յակոբեանի եւ Տ. Արբակ Աբղ. Սարուխանեանի հետ:

Հանդիպման ընթացքին այցելուներ ներողութիւն խնդրեցին կատարուածին համար եւ իրենց աջակցութիւնն ու համերաշխութիւնը յայտնեցին հանդէպ Պատրիարքութեանս եւ Հայ համայնքին: Քննարկուեցաւ նաեւ այսօրինակ դէպքերու յառաջքն առնելու համար միջոցներ մշակելու հարցը:

**ՍՐՔՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՎԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱԻԱՐՏԻՅ ՀԱՆԴԷՍ**

Շաբաթ, 12 Յունիս, 2021-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Սրբոց Թարգմանչաց վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Երկրորդական բաժնի Ամավերջի հանդէսը, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի եւ ի ներկայութեան Հոգեշնորհ Հայրերու, ծնողներու եւ հանդիսականներու հոծ բազմութեան: Հանդէսին յայտագիրը կը բաղկանար երկու մասերէ: Առաջինը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգի եւ Թարգմանչաց շարականի («Որք զարդարեցին») երգեցողութեամբ, զոր կատարեցին Շրջանաւարտները: Երեկոյի ընթացքին շրջանաւարտ սաները հանդէս եկան իրենց սրտի շնորհակալական խօսքերով: Ապա վարժարանի փոխ-տեսուչ՝ Տիար Միհրան Տէր-Մաթոսեան ներկայացուց 2020-2021 ուսումնական տարուայ կրթական տեղեկագիրը: Հանդիսութեան վերջաւորութեան Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ՝ Արժ. Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան շնորհակալական խօսքեր ըսաւ բոլոր ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն, եւ յատկապէս Լուսարարապետ Սրբազան Հօր՝ իր հայրական վերաբերմունքին համար: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը, յանձնեց տասն եւ մէկ շրջանաւարտներու վկայականներն ու առաջադէմ աշակերտներու մրցանակները: Մրցանակներու բաշխումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր պատգամը փոխանցեց Շրջանաւարտներուն: Երեկոն փակուեցաւ «Պահպանիչ»-ով եւ «Հայր մեր»-ով:

**ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ
ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ**


16 Յունիս, 2021-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամավերջեան հանդէսը: Հանդիսութեան բացման խօսքը վստահուած էր վարժարանի քարտուղար՝ Բարեշնորհ Աշոտ Սարկաւազ Ղազարեանին: Երեկոյի ողջ ընթացքին Ընծայարանի եւ Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտներ եւ Ժառանգաւոր սաներ հանդէս եկան իրենց ուղերձներով, ասմունքով ու խմբերգերով, ինչպէս նաեւ դաշնակի գեղեցիկ կատարումներով: Հանդիսութեան վերջաւորութեան Վարժարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեան հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Շրջանաւարտներու վկայականները ինչպէս նաեւ վարժարանի եւ Ընծայարանի առաջադէմ ուսանողներու մրցանակները: Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն յետոյ Տեսուչ Հայր Սուրբը հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որպէսզի իր պատգամը փոխանցէ Շրջանաւարտներուն եւ կատարէ փակման խօսքը: Երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս Օրհներգով եւ Պահպանիչով, ապա ներկաներ պատուուեցան հիւրասիրութեամբ: Ընծայարանի շրջանաւարտներն էին. Բարեշնորհ Դաւիթ Սարկաւազ Մինասեան, Բարեշնորհ Սերգէյ Անտինեան եւ Բարեշնորհ Սերգէյ Սարկաւազ Կազանջեան: Իսկ Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտներն էին. Դպիրներ՝ Արթուր Խոսրոյեւ, Էմին Յովհաննիսեան, Սարգիս Գինոսեան, Յովհաննէս Փոշոյեան եւ Տիգրան Ազարեան:

**ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ ԵԹՈՎՊԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ
ԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱՅՅԵԼԵՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ**

17 Յունիս, 2021-ին, Իսրայէլի մէջ Եթովպիոյ դեսպան՝ Տիար Ռեթա Ալեմու Նեկան եւ Սուրբ Սրկրի Եթովպական Եկեղեցւոյ առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Ամբակում Արքեպիսկոպոս այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան սրբավայրերուն առնչուող հարցեր:

**ՇՆՈՐՀԱԽՈՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՐ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ**

23 Յունիս, 2021-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան շնորհաւորական նամակ յղեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ Տիար Նիկոլ Փաշինեանի: Նամակին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով վարչապետը՝ կ'ըսէ. «Ի բոլոր սրտէ կ'աղօթենք, որ Հայրենիքէն ներս նպաստէք համերաշխութեան հաստատման եւ իրականացնէք մեր ժողովուրդի ակնկալիքները՝ բարձրացնելով Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւններու անվտանգութիւնը, բարեփոխէք Հայոց Բանակը եւ նպաստէք անոր մարտունակութեան վերականգնման, զարգացնէք տնտեսութիւնն ու բարելաւէք մեր Հայրենիքի ընկերային պայմանները»: Նամակի վերջաւորութեան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը կ'աղօթէ վարչապետի քաջաոգոջութեան եւ պարտականութիւններու յաջող կատարման համար եւ կ'ակնկալէ անոր օր մը Սուրբ Երկրի մէջ տեսնել:



**ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԱՂԱՆ ԱԲԵՂԱՅ ԳՈԳՉԵԱՆ ԵՒ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՐՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ**

30 Յունիս, 2021-ին, Իսրայելի Հրէական Համալսարանի մէջ տեղի ունեցաւ Միաբանութեանս անդամներէն Հոգեշնորհ Տ. Աղան Աբեղայ Գոգչեանի շրջանաւարտից հանդիսութիւնը, որուն ներկայ գտնուեցան միաբան եղբայրներէն Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան, Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան, Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան եւ Տ. Ներսէհ Աբղ. Ալոյեան:

Իսրայելի Հրէական համալսարանի՝ Քաղաքագիտութեան եւ Պատմութեան ֆակուլտետի կողմէ Հայր Սուրբի շնորհուեցաւ բակալարի աստիճան:

Իսկ 20 Յուլիս, 2021-ին, Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ֆակուլտետի կողմէ Միաբանութեանս անդամներէն Հոգեշնորհ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեանի շնորհուեցաւ Պատմական գիտութիւններու Մագիստրոսի գիտական աստիճան:

«Սիոն» յանուն Նորին Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր կը շնորհաւորէ Հոգեշնորհ Հայր Սուրբերուն եւ կը մաղթէ նորանոր յաջողութիւններ: Թող որ Աստուած օգնական ըլլայ եւ զօրացնէ անոնց:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՎ ԱԲՂ. ԱԼՈՅԵԱՆ